



Մարդկային
զարգացման
միջազգային
կենտրոն

International
Center for
Human
Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀԱՎԱՍԱՐԱՊԵՆ «ՈՒԺԵՂ» ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐ ՈՒՆԵՆԱՂՈՒ ՀՐԱՄԱՅՆԱԿԱՆԸ

19 Ս ա յ ա թ Ն ո վ ա , Ե ր ե լ ա ն

Հեռ.՝ +37410 58-26-38, Փաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

Ջոն Մեյնարդ Բեյնսը պնդում էր, որ եթե երկու ուղիղներն իրենց բոլոր պարամետրերով պետք է զուգահեռ լինեն, սակայն, այնուամենայնիվ, հատվում են, ապա հարկ չկա փնտվել այդ ուղիղները, որ ուղիղ չեն «մնում», այլ պարզապես պետք է հրաժարվել ուղիղների զուգահեռության արքիոմից և անցնել ոչէվկլիդեսյան երկրաչափության:

Դրամի արժեքավորման հարակից դրսևորումները

Երբեք հայրենական մամուլն այնքան հարուստ չի եղել դրամավարկային քաղաքականության, պետական ֆինանսների և ազգային արժույթի վերաբերյալ քննարկումներով ու վերլուծականներով, որքան վերջին ամիսներին է: Արդյունքում բազմաթիվ դրական հետևանքներ կարելի է այսօր արձանագրել. էապես նվազել են այն գործիչների քանակը, ովքեր հրապարակավ, չզիտես ինչու, հպարտանում են դրամի ուժեղացման փաստով, համարում են այն հզորացող տնտեսության քաղցրապտուղ և տնտեսության համար դրական հետևանքներ են տեսնում: Վտանգի իրական լինելն այլևս ընկալվում է ոչ միայն դեռ մի քանի ամիս առաջ «ընդդիմախոս» համարվողների, այլև զերակայող է դառնում պաշտոնական շրջանակներում (եթե նույնիսկ ոչ հրապարակային): Իսկ սա, համաձայնեք, արդեն իսկ էական առաջընթաց է:

Ինչու՞ է հարցն անընդհատ հրապարակում

Տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքն ինքնակազմակերպման հիանալի հատկություն ունի, այստեղ որևէ բաց կամ վակուում չի լինում, երբ որոշ ֆորմալ ինստիտուտներ պակասում կամ թերանում են, տվյալ գործառույթներն սկսում են իրականացնել այլ ֆորմալ կամ ոչ ֆորմալ ինստիտուտներ: Օրինակ, երբ տարբեր պատճառներով թերանում են դատարանները, զարգանում է «ինքնադատաստանի/վրեժի» ինստիտուտը, երբ հստակ կանոնակարգված չէ գերատեսչության հետ հարաբերվելու ինստիտուտը, զարգանում է «կոռուպցիա» ինստիտուտը և այլն:

Երկրի մակրոտնտեսական քաղաքականությունն իրականում երկու կարևոր՝ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների արդյունավետ համադրման համալիրն է: Հետևաբար տնտեսության ինստիտուցիոնալ կառուցվածքի տվյալ հատվածի կիզակետում «կենտրոնական բանկ» և «կառավարություն» ինստիտուտների գործակցության ու փոխզսպման մեքենան է, որի անսարքության դեպքում քաղաքականությունների հավասարակշռմանն ուղղված քննարկումների գործառույթն անցնում է մամուլին ու հանրային այլ ինստիտուտներին: Մի բան, ինչի ականատեսն ենք այսօր:

Մտավարժանք

Պատկերացնենք «մակրոտնտեսական քաղաքականություն» դատական գործընթացը, որտեղ հաշիվներ են պարզում «ինֆլյացիան» (դատապաշտպան՝ կենտրոնական բանկ) ու «տնտեսական աճը» (դատապաշտպան՝ կառավարություն): Ի՞նչ էք կարծում, արդյո՞ք կողմերը արտադատարանական հաշտություն կնքեն և կշարժվեն «հաղթող-հաղթող» սկզբունքով այն պայմաններում, երբ կողմերից մեկի շահերը պաշտպանում է ժամանակի բոլոր պահանջներին համապատասխան, տեխնիկական և մարդկային ռեսուրսներով գերհագեցած, սեփական հետաքննություններ անցկացնելու համար բավարար ֆինանսական

և տեխնիկական միջոցներով աչքի ընկնող, հայտնի ու հավակնոտ իրավաբանական ընկերություն, իսկ մյուս կողմի շահերը՝ բազմաժողով ու համեստ հանրային իրավապաշտպանը:

Լավ մոռացված հինը

11 տարի առաջ ՀՀ կենտրոնական բանկին օրենքի ուժով անկախություն տրվեց այն համոզմունքից ելնելով, որ պետք է մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող երկու ինստիտուտները՝ կենտրոնական բանկն ու կառավարությունը (մասնավորապես Ֆինանսների և էկոնոմիկայի և Առևտրի ու տնտեսական զարգացման նախարարությունների մակրոտնտեսական քաղաքականություն մշակող/իրականացնող ստորաբաժանումները) հավասար մրցակցեն և այդ մրցակցությունում ձևավորվի հաշվեկշռված քաղաքականությունը: Գաղտնիք չէ, որ մակրոտնտեսական քաղաքականության առանձին հարթություններում գների զսպմանը և տնտեսական աճին ուղղված մոտեցումները կարող են հակասել միմյանց: Մտահղացումն այն է, որ նշված մրցակցությունն է հենց, որ թույլ կտա ստանալ արդյունավետ հաշվեկշիռ: Սա մի մոդել է, որը մենք պարզապես փոխ ենք առել և որն աշխարհի տարբեր երկրներում հասցրել է կուտակել իր գործունակությունն ապացուցող հարուստ պատմություն:

Այս մոդելը, որ պատկերացվում էր ԿԲ-ին անկախություն շնորհող առաջին օրենքը մշակելուց, ենթադրում է, որ մրցակցում են մասնագիտական կարողություններով ու հնարավորություններով երկու հավասար ինստիտուտներ (ԿԲ և կառավարության համապատասխան ստորաբաժանումներ): Իսկ ցանկացած ինստիտուտի հնարավորությունների մակարդակը մեծապես պայմանավորված է կադրերով ու ինստիտուցիոնալ հնարավորություններով: Որպեսզի պետական երկու կառույց կարողանան հավասարապես «մրցել» քաղաքականության վրա ազդեցության իրենց վերլուծական ունակություններով, նրանց համար պիտի հավասարապես հասանելի լինի երկրում առկա մասնագիտական ներուժը: Հավասար մրցակցության համար կողմերը պիտի կարողանան վարել աշխատանքի վարձատրության հավասար քաղաքականություն, ապահովել աշխատանքի հավասարազոր պայմաններ ու հնարավորություններ, և դա մեծապես կազդի իրականացվող քաղաքականության վրա: Համոզված ենք, դա իր դրական ազդեցությունը կունենա նաև արժույթային քաղաքականության վրա, որն այսօր պահանջում է համարձակ ու նորարարական քայլեր ու նախագծեր:

Եզրակացությունը մեկն է և երկիմաստություն չի պարունակում. մենք պիտի վերականգնենք կորուսյալ հավասարազորությունը մակրոտնտեսական քաղաքականության ինստիտուցիոնալ դաշտում: Սա է պարտադրում նաև տնտեսության իրական հատվածի հիմքերը խարխլող՝ դրամի արժևորման գործընթացը:

Ինչի՞ց սկսել: Օրինակ, 2007թ. պետական բյուջեի նախագծի քննարկումների ժամանակ, իբրև քաղաքականության ճշգրտում, փորձել անել այնպես, որ կառավարության վերոնշյալ ստորաբաժանումների աշխատողների միջին աշխատավարձն ու աշխատանքային պայմանները պակաս չլինեն ԿԲ դրամավարկային քաղաքականություն մշակող/իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցների աշխատավարձերի ու աշխատանքային պայմանների մակարդակից: Անհավանական է թվում, սակայն առաջին հայացքից պարզունակ թվացող այս առաջարկն իրականում ունակ է հավասարակշռող կարևոր խթան հանդիսանալ և նպաստել, որ դրամի (արդեն կործանարար թվացող) արժևորման պայմաններում մեր երկիրը կարողանա հաղթահարել իրականացվող մակրոտնտեսական քաղաքականության ընդգծված միաբևեռայնության վտանգավոր իրողությունը:

*Համառոտագիրը մշակվել է ՄՁՄԿ 2006թ-ի սեպտեմբերի 23-ին կայացած՝ «ՀՀ դրամի շարունակական արժևորման ինստիտուցիոնալ նախապայմանները» վերնագրով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կրոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:
Քննարկումը կազմակերպվել էր «Ֆրիդրիխ Էբերտ» հիմնադրամի աջակցությամբ:*

